

Յ Ե Ւ Ե Լ Ո Ւ Յ Ծ

Հ Ա Յ Ա Ս Ա Ն

Լ Ր Ա Գ Բ Ո Յ Ն

Վ էննայի սուրհանդակով եկած լուրերուն մէջ երեւելի և միանգամայն ցաւալի լուրը սա է որ դարձեալ Գաղղիա մէծ տագնասի մէջ ինկեր է :

Ինչպէս որ անդին խօսեցանք, Խոալիսի գործերուն վրայով խօսիլը Պ. Լ էտուիւ - Ռոլէնին յանձնուած էր, բայց անձնական տկարութեամբ պատճառաւ յունիսի 11 ի ժողովքին մնաց : Այն օրը Լ էտուիւ - Ռոլէն յանցաւոր ցուցունել ուղեց թէ հասարակագետութեան նախադահը և թէ նախարարները Հ ռոմայու հասարակապետութեան դէմ թշնամանալուն համար : (Օտիլօն Պառօ հարցուց անոր թէ որ դատաստանին առջեւը տեսնալ կ'ուղէ իւր դատը : Այս հարցմանը պատասխան ըլլալով՝ Լ էտուիւ - Ռոլէն միայն սա ըստ որ, սահմանադրութիւնը ուղիք տակ առնուած է, մենք սահմանադրութիւնը պիտի պաշտպանենք, այս բանի համար վերջապէս զէնք ալ պէտք ըլլայ նէ՝ պիտի բանեցունենք : Պ. Վէկիւու տ' Վէկէսօ դարձաւ ըստ որ, ճակատնուն վրայ արեան բիծ ունեցող մարդիկը անոնք են որ, հոս կուգան՝ ժողովուրդը քաղաքական ու արտաքին պատերազմի կը հրաւիրեն : Վ երջապէս այն օրը կողմանի երկար ու սաստիկ վէճեր ըլլալէն ետեւ, հետեւեալ օրը Լ էտուիւ - Ռոլէնին ամբատանութիւնը ընդունուեցաւ, բայց այն վէճերէն հոռմայեցոց սա օդուտը ելաւ որ, դաղղիացիք Հ ռոմ առնելէն ետեւ՝ հոռմայեցոց կամացը պիտի յանձնեն որ՝ ինչ կերպ կառավարութիւն կ'ուղեն նէ՝ այն կերպ կառավարութիւն և իրենք ալ անոր պաշտպան ըլլան :

Երբոր (Օտիլօն Պառօ Պաղղիայի այս դիտաւորութիւնը յայտնեց, ժողովքի անդամներէն մէկը անոր հարցուց թէ, ուրեմն ինչո՞ւ համար Հ ռոմ զարնել տուիք : Վ էտրիացոց ժամանակ չի թողւնք որ՝ ներս մտնան, պատասխանեց : Անանկ է նէ, կըկնեց դարձեալ այն անդամը, աւսդրիացոց դէմ ալ պատերազմ ընել հարկ պիտի ըլլայ, որով

հետեւ միշտ Գաղղիայի շահուն ու պատուցն գէմ կը շարժի : Այդ ինդիբրը՝ ըստ Պ. Վօկէն, վաղուան թող մնայ, վասն զի վազը ուսուսին աւսդրիացոց օգնութիւն ընելուն վրայ պիտի խօսուի :

13 ի Օրէնսդրական ժողովքը վճռեց որ՝ թէ Փարիզ և թէ բոլոր կասկածելի քաղաքները պաշարութիւն, որովհետեւ արդէն նոր յեզափոխութեմը նշյաները կ'երեւային, աղատականները Փարիզի մէջ ասդին անդին պատնէշներ արդէն կանգներ էնին ու կը պատերազմէին Վանկառնիէ զօրապետին դէմ որուն յանձնուած էր զանոնք զոպէլ :

Քահվէ տը Փառի կոչուած սրճանոցին առջեւը խիստ բարձր պատնէշ մը շինուած էր, այն տեղէն բաւական ընդդիմութիւն ցուցուցին ապատամբները և կ'աղաղաղակէին որ, օրէնսդրական ժողովին անդամները նախարարները և նախադահը մինչեւ որ չի փախուին նէ՝ զէնքերնին վար չի պիտի դնեն, Բայց կառավարութեան կողմը յաղթեց, հիմակու հիմա Փարիզ հանդարտ է :

Լ էտուիւ - Ռոլէն Փարիզէն փախեր է, բայց Լ իօնի մէջ բռնուեր է եղեր :

Բայտ լատինացոց յունիսի 13 ի օրագիրը այս լուրը տուաւ մեղի, բայց բանիւ ուրիշ շատ լուրեր ալ հասան հոս Փարիզի համար որոնք ասօրուան շոգենաւով սուտ ելան :

- Լ իակատար իշխանութեամբ Հ ռոմ խաւրուած Պ. Լ էսէբի գործած գործերուն մէջ պակասութիւններ աւեմնալով կառավարութիւնը քըննութեան ներքեւ ձգեր է զանի :

- Յունիսի 14 ին Հ ռոմ առնուեր է գաղղիացիներէն և ասոնցմէ 2000 հոդի մեռեր է :

- Պէլլագրատէն եկած լուրերը մինչեւ մեր յունիսի 10 ը կը հասնին, բայց մաճառներուն պատերազմէն նոր երեւելի լուր մը չի կայ :

Քօլուան իւր կոտորածը կը շարունակէ Փարիզի մէջ և Վ էննա, Լ օնառա և Տուպին ալ սկըսեր է այս ախտը :

Օ Ա Ռ Յ Ո Ւ Ց Ո Ւ Յ Ն

Վէյօլուս բէօրնեօւ առընդ ժեւակիր գեւցիկ բուն հը կայ, դասն և վեց իանդուն ու կես երես ունի և դասն և կիսդ կանդուն իորութիւն, դասը սենեակ, ընտարբակ իուհանց հը, ջամացլը, մախնէն, սանը, հօր և այլն : Տարին 20,000 դուռը վարչէ իւրեւ :

Այս պատրուական բունը բիւնուն բրուեց 550 դիլէրի քայ, ամէն մէկ դիլէրէ 1000 դուռը : Վէլինեւ

կը ծախուին ճայրաւաղին օրոգի հրատարակի ներուն և Պօստոյի պաօրինին չով, ուսպի մէց գրադաւն ալ կայ ծախուղիէլ : Վիլիներուն սպակը բիւնուօին վրայ վէրապեսուշ գըտնուող Պ. Վառանուած Բօսբին պիտի ժողվէ ծախուղիէլ և ինչն ալ Պ. Ջագ Վէլօնին պիտի պատկերունէ մինչ բիւնութիւնը կը շաբաթական Պօստոյի ելլալը օրն ալ ու բուն օրագիւթիւնը միջացաւը ուսպան պիտի իմայ բրուին :